



Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն  
National Statistical Service of the Republic of Armenia

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 2003 ԹՎԱԿԱՆԻՆ

## FOREIGN TRADE OF THE REPUBLIC OF ARMENIA FOR 2003

*(Վիճակագրական ժողովածու)*  
*(Statistical handbook)*

Վիճակագրական ժողովածու  
Statistical handbook

*Ըստ ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային  
անվանացուցակի 4-նիշ դասակարգման  
According to the Commodity Nomenclature  
of External Economic Activity of CIS, at 4-digit level.*

Հայաստանի Հանրապետության Ազգային  
վիճակագրական ծառայություն, 2004թ.



National Statistical Service of the  
Republic of Armenia, 2004

## Ն Ա Խ Ա Ք Ա Ն

«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003 թվականին» վիճակագրական ժողովածուն ընդգրկում է գլխավորապես հանրապետության 2003թ. արտաքին առևտրի վերաբերյալ տվյալները: Ժողովածուի նյութերի հիմքում ընկած են ՀՀ մաքսային վիճակագրության և վիճակագրական հետազոտությունների տվյալները:

Ժողովածուի մեջ բերվում են հետևյալ տվյալները.

- արտահանման և ներմուծման ծավալները բնափրային և արժեքային արտահայտությամբ (տոննա և ԱՄՆ դոլար),
- արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի (ԱՏԳ ԱԱ) 4-նիշ դասակարգման, ինչպես նաև առանձին՝
  - ըստ բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների
  - ըստ քաղաքացիների կողմից կազմակերպված առևտրի տվյալների:

Արտահանման ծավալներում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները, իսկ ներմուծման ծավալներում՝ արտասահմանյան արտադրության ապրանքները, որոնք ներկրվել են հանրապետություն՝ ներսում սպառման և վերաարտահանման համար:

Արտահանման և ներմուծման ծավալներում չեն ընդգրկված արժեթղթերը, շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները, դրամական ոսկին, հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումները, ցուցահանդեսների և տոնավաճառների համար առաքված կամ ներկրված ապրանքները:

Արտահանման ծավալները հաշվարկված են ՖՕԲ-գներով, իսկ ներմուծմանը՝ ՍԻՖ-ով (ներառյալ ապահովագրությունը և տրանսպորտային ծախսերը՝ մինչև ներմուծող երկրի տարածք):

## I n t r o d u c t i o n

“Foreign Trade of the Republic of Armenia 2003” statistical handbook mainly covers data on foreign trade of the republic for 2003. Customs declaration and statistical surveys data were as a basis for the handbook materials.

The following data are presented in the handbook:

- exports / imports volumes in kind and value (ton and US Dollars)
- exports / imports volumes according to the Commodity Nomenclature of External Economic Activity of CIS, at 4- digit level
- by the customs' declarations data
  - by the citizens trade data

Both commodities of local production and re-exported goods of foreign production were included in the volume of exports, and commodities of foreign production consumed and re-exported were included in the volume of imports.

Exports / imports volumes did not include securities, money in circulation, monetary gold, transit transportation of foreign goods through the territory of the republic, commodities sent or brought for exhibitions and fairs.

Exports volume was calculated in F.O.B. prices, and imports volume in C.I.F. (including insurance and transportation costs up to the border of the importing country).

Ազգային դրամի վերահաշվարկումը ԱՄՆ դոլարով կատարվել է համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի ամենօրյա պաշտոնական փոխարժեքի:

Արտահանման և ներմուծման ծավալների շատ փոքր ծավալների դեպքում աղյուսակներում օգտագործվել է 0.0 նիշը, իսկ բացակայության դեպքում՝ “ 0 “:

Քանի որ աղյուսակներում տվյալները բերված են ստորակետից հետո մեկ նիշով, հնարավոր է, որ հանրագումարներում լինեն 0,1-0,3 տասնորդականի անճշտություններ: Դրանք կլորացման արդյունք են:

Recalculation of national currency into US Dollars was done according to the everyday official rate of the National Bank of Armenia.

Exports / imports volume insignificant amount was shown as 0.0, non availability of exports / imports volume was shown as “ 0 “ in the tables.

We would ask the readers to send their remarks and proposals, if any, to the Statistics Department of Armenia. The presented data are approximate (for 0,1-0,3) as a result of rounding.